

Հայրապետական պարզեւութ.

Ծնորչեցան Կոնդակք Հայրապետականք
Սարգիս քահանայի Տաշբուլաղ գեղջ Նուխուոյ
գաւառի՝ Գործակալին Դառնուոյ Դրիգոր քա-
հանայի Բէկջղաղլուայ. Զաքարիայ Քահանա-
յի Արտաշար գեղջ. Դուկաս քահ. ի Ռէհան-
լու գեղջ, յաղազս կրելոյ Քահանայական Հան-
ջախաչ. Աւագ քահ. ի Համամու գեղջ յա-
ղազս Հնորհելոյ զպակիւ Աւագ քահանայու-
թեան. Մկրտիչ քահ. ի Դանձապետեան Ն.
Նախիջևանի յաղազս կրելոյ զմաւշեայ զր-
իարկն կամիլուիայ կոչեցեալ. թ. թ. 816.
820, 821, 822, 902, 903:

Ծնորչեցան վարդապետական ականակուու
լանջախաչ Յ. Արտէն վարդապետի Նշոմեան,
միաբանի Մայր Աթոռույս. թ. 912:

Արժանացողութ Հայրապետական Դոհունակու-
թեան եւ Օրդնութեան.

Կոնդակ օրհնութեան և գոհունակու-
թեան յանուու թարա բեղի Թթիւի-բեղեան
Ծուշեցոյ, յաղազս նուիրաբերութեան նո-
րա արծաթ հին զրամոց և այլ հնութեանց
վասն նորոց թանգարանի Մայր Աթոռույս,
թ. 815:

— Օրհնութեան և գոհունակութեան
յանուու պ. Խաչատրոյ Կարապետեան Անուշ
յՈղեսսա, յաղազս քրիստոնեական մարդա-
սիրութեան նորա զօր եցոց առ սպիտու
նահանգացն Առասիոյ, թ. 817:

— Օրհնութեան և գոհունակութեան
յանուու ուսուցչապետ Եղիսաբետ. Սովոմե-
նեան ի կիւլի ի համալուրանի Ս. Վաղիսերայ,
յաղազս հոդածութեանց նորա վասն սար-
կաւագ ուսանողաց Մայր Աթոռույս. թ. 878:

— Օրհնութեան յանուու թշկապետ Թա-
գարաստայ Նուասարգեան ի Տփիխու որպէս
հիմնագրի Կովկասեան բարեգործ. Ընկերու-
թեան Հայրց ընտրելոյ ի պատուաւոր ան-
դպանութիւն նորին. թ. 900:

— Օրհնութեան և գոհունակութեան
յանուու մահու. Կարապետի Արևանեան ի
Ռուսուուկ Ռուսանեայ, յաղազս ասան Գաղ-
զիական սովի նուիրաբերութեան նորա առ
նորին Վեհափառութիւն. ի ձեսն Կարա-
պետ Ա. քահ. ի Պայտեան. թ. 905:

ԿՐԿՆՈՒԱՆ ՄԵՂՔ:

Այս յուրամ այսն պիտի երածիցի ի
մարդոյ շոյի բնի անցրցին տեսիս. իմայտ
հանգիս, եւ նէ զտան: Յույնուամ առ.
Դարձաց ի տուն իմ ուսուի ելին. եւ եկառ
զտան պարապուց, մայրեալ եւ յարդարեալ:
Յայթամ երայ եւ առնու բնի իւր հօրն
ուշ այս յարագոյնն ան զիմբն եւ մանա-
րակի անց, եւ լինի յետին մարդոյն այնո-
րի շոր նան զտան:

Մատք. մթ. 43—45:

Մ

Եթ այժմեան լիզուով կամ այժմեան
աշխարհահայեցողութեամբ արդարե
ժգուարդիանելի մի այլարանութիւնն Բայց
առ խօսուած է ատանեակ զարեր առաջ այն-
պիսի մի ժողովրդի համար, որ իւրաքանչիւր
հոգեկան խանգարում՝ մտաւոր լինելը թէ
բարոյական չար ողիների աղջկացութեանն եր
վերապրում ընդունում էր, որ այլպիսի ո-
գիներ խիստ շատ կան երկրիս վերոց և որ
նոցա սովորական ընակավոյըը անմարդարնակ
անհապաններն են, բայց որ նորա առանձին
փափագով հետամուտ են կննդանի արարած-
ների, առաւելուպէս մարդոց մէջ բնակութիւնն
հաստատելու՝ իրենց չար բնութիւնը նոցա
հաղորդելու, տանջելու նոցա և իրենց քմա-
հաճոյքին ծառացեցնելու: Առօրեայ փորձը
ցոյց էր տուել որ ինչպէս մարմնական, այն-
պէս և հոգերու տիկորութիւնները մի անդամ
ժամանակաւոր կերպով րժշկուելուց յեալոյ,
եթէ նորից կրիւուեն, շատ տեկի ստատիկ
են լինում, իսկ այդ Քրիստոնի ժամանակա-
կիցների լիզուով նշանակում էր՝ առաջ հի-
ւանդի մէջ մի զի կարս այժմ շտաենն են
նստած: Եւ Քրիստոն որ էր ըրջաւուառող-
ների հետ մէշտ նոցա զիւրմբանելի լիզուով
էր խօսումն նոցա սովորական կեանքից ու
փորձառութիւնից օրինակներ առնելով՝ սյո-
սեղ ևս նոցա ըմբոնոցութեան յարմար մի
օրինակ և վերցնումն և նորանով մի խորիմաստ
ծմարտութիւն բացատրում:

Մատթեոսի առ ետարանին նայած՝ խօսքն
այսիդ անմիջապէս հրեայ ժողովրդի մասին
է Քանի անզամ Աստուծոյ կողմէց մարդա-
րէներ օրէնսդիրներ են եկել այդ ժողովրդի

մօտ, նա ըստ երեսութին զզջացել խոստացել էր արդարութեան ճանապարհով գնար, բայց ի բարձանչի քանդամ կարծես միշտր ողինորան մոլորեցրել էր և կրկնապատիկ եռանգով Աստուծոյ կամաց հակառակն անելու տախովել Այժմ այդ օրինապահ և արդար համարուող ազդի առաջ ամենածանր փորձութիւնն էր զրուած, ծշմարիտ Մ'եսիան Աստուծոյ Որդին ապաշխարութեան աւետարանն էր քորողում նորան՝ Երենքի արքայութիւն խոստանալով, և նա պէտք է մերժէր փրկութեան աւետարանը անարգէր Աստուծոյ Հոգին, որ Տիրոջ ընտրեալի բերանով խօսում էր նորա հետ, և թոյլ տար, որ չարութեան ողին իւր բոլոր արբանետիներով զար իշխեր նորա վերաց և զէպի ամենաթշշուառ ապազայ տանէր նորան: — Ղաւկասու աւետարանի մէջ Քրիստոս խօսում է առ հասարակ զիւական իշխանութեան զէմ իւր գործ դրած զօրութեան մասին: Հրեաների, ինչպէս նաև զեռ մեր հաստրակ ժողովրդի մէջ, կոյին շատ երգմնեցուցիչներ որոնք զանազան ազօթքներով հմայութիւններով զիւահարներ բժշկել էին աշխատու մ նոցա բժշկութիւնը համարուում էր հարկու Աստուծոյ օգնութեամբ եղած զործ, միջդեռ Քրիստոսի կատարած բազմաթիւ հրաշալի բժշկութիւնները տեսնելով և նոցա իսկութիւնն անկարուոյ լինելով ուրանակ՝ նախանձօրդները չպատկառեցին նոյն իսկ սատանայական օվնութեան վերագրելու այն և աշա Փրկիչը նոցա անմիտ չորութիւնը երեսներին և առիս և նոցա վաս կարծիքի կատարեալ անհեթեթեռութիւնը ցոյց տարու համար օրինակ և բերում հրեաց երդ զըմնեցուցիչներին օրոնց մասին նորա այնպիսի լաւ կարծիք ունեին: թէպէտ իւր և նոցա արածի մէջ զանազանութիւնը շատ մեծ էր: նմէ սոցա երբեմն մի բժշկութիւն յաջողութեամբ էր: պատահական բան էր այդ, նոքան ելած օգու վերաց իշխանութիւնն ունեին ոչ էլ առեղջ մէկ ուրիշը զնել կարօղ էին: ոչ զին մասում էր ազտու և նորա բնակութիւնը զատարի՝ երբ կամենար, էլի կարող էր զալ այնակ հաստատուել: իսկ նըքը իշխանառու լինելով բոլոր ողիների և Աստուծոյ արքայութիւնը հաստաելու եկած՝ իրեն յատուկ

իշխանութեամբ կապում կաշկանդում էր չարի զօրութիւնն ամէն տեղ, ուր իւր զիւացն էր ելուում և տալիս էր նոր հողի, որ չարի բնակուան մարգուն Աստուծոյ տաճար էր զարձնուում և այնուհետեւ ոչ մի պիղծ արքանեակ այլ ևս նորան մօտենալ չէր համարձակի:

Սակայն վերօյիշեալ խօսքերը մեզ համար մի յատուկ և աւելի ընդհանուր իմաստ ունին անկախ նորանից: թէ ի՞նչ հանգամանքներում և ի՞նչ նպատակով են առուել: Ամփափ և զեղեցիկ կերպով նկարազրուած է այստեղ մոլութիւնների յառաջ զալը մեր մէջ, և եմէ այդ խօսքերի խորը թափանցենք՝ պարզ կինի նաև: թէ ի՞նչպէտք է նոցա զարգացմանն ընդդիմոցինք: Մ'ոլութիւնն առուում այն չար հակումները, որոնք շատ անդամ կրկնուելով հաստատուել ու ամրացել են և ապա բռնի ոց են գործ գնում մարգոց վերաց: երբեմն հակառակ նոցա իսկ կամքի նործուած չարութիւնը սովորաբար իսկոյն և եթե բոյն չի զնում մարգու մէջ, առաջին զողութիւնից ստանասութիւնից, սպանութիւնից յետոյ այն մարգը որ իրեն բարոյական հրէշ չէ ծնուած: կամ շրջապատող զժրախա հանգամանքների շնորհիւ վարաժամ վացած խոզի խիստ խայթ է զզում և զզջում, մի միջոց է որոնում քաշելու իւր արտրմանքը, վախցնում է՝ կարելի և ասէլ իրենից մոլորեցուցիչը չար ոգուն, բայց վայ և, եմէ այդ ողին վերագրաբար, կրկն իւր թելազրութիւնների համար հնու ականջ և գրիծող ձեռք գտաւ: նա զալիս է այն ժամանակ սպասազինուած ու զրահաւորուած: մի քանի իւր նման արբանեակներ ևս չետք: «Մ'եզքը դրանդ պառակած է, առում է Աստուծու կայենին, երբ նախանձը կրծում էր նորա սիրար, «հետամուս է, քեզ բայց զու պարտաւոր ևս իշխել նորա վերաց, պէտք է ենթագրել: որ զեռ ուշ չէր, կայեն զեռ զերի չէր չար ոգուն մասուցած առջարագրուած ազդարարութիւնը, թէ վերիշը զնել կարօղ էին: ոչ զին մասում էր ազտու և նորա բնակութիւնը զատարի՝ երբ կամենար, էլի կարող էր զալ այնակ հաստատուել: իսկ նըքը իշխանառու լինելով բոլոր ողիների և վերջադրուած ամենամեծ ոճի ուժուում է նաև ամէն չարագործի չետք կրկնեաւ:

լովի վարժեցնելով ի՞նչ յատկութիւն ասես կարելի չէ տալ մարդուն մի հրեշտականման անմեղ անպատա աղջիկ երբեմն մեղքի մէջ թաթախուելով ի վերջո զգուելի կաւատ կամ կատաղի ֆուրիա է դառնում իսկ վայրագ գաղանը մեղմ բարիքերի վարժուելով՝ լինումէ հեղ անմեաս մի գառա Յանցանքից ազատ պահել մարդուն գժուար և անհնարին գործ է բայց կարելի է յանցանքի կրկնութիւնից՝ մոլութիւնից ազատ պահել և հարկաւոր է ամենամեծ ուշագրութիւն դորա համար Խնդիրն այն է ամեն դէպքում թէ արդեօք մի անգամ չար ոգու ազդեցութեան ներքոյ ընկնելուց և նորան փախցնելուց յետոյ ի՞նչ վիճակի մէջ է միում նա և նորա ընակարանը՝ արդեօք կապում կաշկանդում ենք չարութիւնը, թէ ազատ իւր կամքին թողնում մի նոր բարի ողի ընակեցնում ենք նորա ընակարանում թէ թողնում գաատրի, սրբած ու պատրաստած՝ անպահաս հիւրերի համար:

Ահա այսպիսի խնդիրների մէջ է երեսում քրիստոնէութեան մեծ և անփոխարինելի զօրութիւնը հոգիների վերայ: Խնչպէս յայտնի է, մի գործի չար լինելն իմանալ բաւական չէ նորանից յետ կենալու համար: «Ո՛չ եթէ զոր կամքին զայն առնեմ այլ զոր ատեամն զայն գործեմ» բոլոր մատածող և բարյական զգացման տէր մարդոց դառն խոստովանութիւնն է այս. շատ բան կայ, որ մենք զիտենք վատ է, բայց տհում ենք, և խրատ փորձ, զիտութիւն սովորաբար անզօր են զանուում դիմագրելու այլպիսի չար հակումների: անում՝ զղչում ենք, և կրկին ենք անում մինչեւ որ վատը մեզ համար սովորական է դառնում և այլես խղճի խայթ չէ պատճառում: Որպէս զի չանենք՝ մի հնար կայ միայն զորա համար, մեր հոգու մէջ լաւութեան այնպիսի մի չքնաղ պատկեր բարյական այն պիսի մի մղիչ զօրութիւն պէտք է դառնուի, որ երբ մի չար հակում շարժուում է այնտեղ՝ յանչափս խոտելի ու զզուելի երեայ մեզ այն, մենք անկարելի և մեր արժանապատուութեան անվայել համարենք պաշտած պայծառ պատկերի մօտ թողնել այդ չար համան սկ ստուերը, այլ մեր ներքին բարյական զօրութեան շնորհիւ իսպառ դուրս մղել կա-

րողանանք այն մեր հոգուց: Խսկ այդպիսի պատկեր մեր հոգու մէջ զծում և մեզ այդպիսի բարյական զօրութիւն տալիս է քրիստոնէութիւնը միայն Քրիստոսի չար ոգիների վերայ ունեցած մեծ ազդեցութեան զադանիքը հենց նորանում՝ է: որ ուր Նորա տառածային զսեմ կերպարանը պատկերանում էր՝ ամեն զժոխային ստուեր պէտք է, տեղի տար: և ուր Նորա հոգւոյ ամենայալը բարյական զօրութիւնն էր ներդործում՝ ոչ մի զիւական ոյժ զէմ զնել չէր կարգ: Երբ Նա մի զիւահարի բժշկում էր: արդիւնքն այն չէր միայն որ մի տառապեալ ապաքինուում էր իւր ցաւերից այլ որ մի հոգի ազատուում էր՝ Քրիստոսի հոգւոյ աւետարանական ծըշմարտութիւնների ընդունարան լինելու համար: այնուհետեւ այդ հոգին մի սրբավայր էր: որի զրան առաջ ընդարմացած ու կաշկանդուած կանդ պիտ առնեին չարի արրանեակները՝ մուաք ու տեղ չդանելով այնտեղ:

Մարիամ Մազդրինացու կրծքից Քրիստոս եօթն զե հանեց, և նա մի սրբութի զարձաւ՝ իւր ծիրոջ և Բարերարի ամենաջերմուանդ հետեղն ու Նորա հրաշափառ յարութեան առաջին քարոզիչը: Այսօր շատ փորձեր են անում մազդակինացիներին ու զիդանապարհի վերայ կանգնեցնելու՝ ըստ մեծի մասին ապարզիւն: նոյա տաղիս են կեանքի շատ զիւրութիւններ: աշխատանքի միջոցներ են հայթայթում խրաներ ու քարոզներ են կարգում նոցա զիմնին՝ բոլորն ի զուր: երբեմն հնարաւոր է լինում չար ոգիներին հեռացնել առժամանակ նոցանից, բայց շուտով զալիս են աւելի մեծ բազմութեամբ և զատարկ զանելով ու պատրաստ նախկին օթեանը՝ հաստատուում են կրկն այնտեղ և դէպի անդառնալի կրուստ տանում խեղճերին Քրիստոսի սուրբ անունը միայն այսօր ևս այդ ոգիներին ընդ միշտ կաշկանդելու զօրութիւնն ունի: յանձնն Քրիստոսի մեզ ներկայացած վում չնաշխարհիկ բարյական կեանքը վառ գոյներով անկեալի առաջ պատկերացնելով միայն կարելի կիմի այնչափ հրապարիչ դարձնելու որ նա նողկանք զզայ իրեն խեղգոր ապականութիւնից և տենչ վեր բարձրանալու: այդ զսեմ

կեանքով ապրելու: Եւ ոչ միայն մազգայինացիների համար այդպէս, այլ և մեզ բոլորիս համար, որ գերի ենք չար ոգիների, չար հակումների, չար ցանկութիւնների: Իսկ եթէ Քրիստոսի հօգին մեր մէջ ընդունենք և սուցանենք անդադար՝ կիմնենք ապա ազատ նոցանից, ըստ այնու թէ՝ «Եթէ Որդին զձեղ ազատեցուացէ՝ ճշմարիտ ազատ լինիջիք»:



ԲԱՅԱՏՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՈՅ ԿԵՏԵՐ

Ա. ԳՐ. ԸՆ. ՄՀ. *

Ի. «Եւ իրեւ անցին յայնկոյս: յերկիրն Գերգեսացւոց, պատահհեցին նմա զիւահարք երկու ելեալք ի գերեզմանացն, չարաչարք յցդ» (Մատթ. Ը. 28). բայց Մարկոս և Ղուկաս աւետարանիները մի զիւահարի նկարագրութիւն են անում (Մարկ. Ե. 2. Ղուկ. Ը. 27), Այլ և ինչու վնասաց խոզատէրերին. եթէ հրէից արգելեալ էր խոզի միս ուստեւը. չէ որ Հռովմայեցիք ուտում էին:

— Գերգեսացւոց երկրի զիւահարի պատմութիւնն առհասարակ իւր մի քանի արտասովոր գծերով աւետարանի ինքնուրոյն հատուածներից մէկն է և շատ մեկնարանի մըտատանջութիւններ է պատճառել: Մատթէսի աւետարանի մէջ մի զիւահարի փոխարէն երկու է ամենայն հաւանականութեամբ այն պատճառաւ, որ նա Մարկ. Ա. 23—26 և Ղուկ. Դ. 33—35 պատմուած զիւահարի մասին չի յիշել: սորա պատմութիւնը ինչպէս է եղել խառնուել է ներկայ պատմութեան հետ: Իսկ թէ ինչպէս գեերը խոզրում են, որ Քրիստոս թոյլ այց նոցա խոզերի մէջ բնակելու, ինչպէս սորա կատաղած ջուրն են թափում են, մեր այժմեան աշխարհահայեցողութեամբ ըմբռնել գժուար է. բայց մենք կարող ենք մօտաւորապէս որոշել թէ ինչպէս էր մըրանում ժամանակակից մարդը: — Դեերի կողմից խօսում էր ի հարկէ ինքը զիւահարը: որ համօղուած էր թէ իւր կատաղութեան

սասակութիւնը իւր մէջ նսառող զեերի բազմութիւնից է յառաջ գալիս. (Հռովմէական լեզիոնը 6000 և աւելի զինուորից էր բաղկացած): Դեերը խնդրում են թոյլառութիւն խոզերի մէջ մանելու, որովհետեւ տեսնում են, թէ Քրիստոսի ներկայութեամբ անշնար էր այլ ևս մարդոց մէջ մնալ. իսկ նոցա համար աւելի լաւ էր միշտ օր և է կենզանի արարածի քան գատարկ արարածութեան մէջ լինել Խոզերը, որ կարող էին այս կողմերում բազմութեամբ լինել, որովհետեւ Յորդանանի Արևելան կողմի բնակիչները մեծ մասամբ հեթանոսներ էին՝ ներկայանում են այսաեղ իրեւ գեերի պղծութեան համապատշաճ անսուրը կենզանիներ, սոցա ծովը թափուելով զեերն իրենց ստանայութեամբ խարուած, կալանաւորուած և գէպի գժուխքի անդունզը տարուած են լինում:

Իրոզութիւնն ուրեմն այնպէս է յարմարեցրած սյասեղ հրեայ ժողովրդի հասկացողութեան, որ մենք նորա խկական ընթացքի մասին մօտաւոր եղակացութիւններ միայն կարող ենք անել: Գալով այն հարցին, թէ ինչու խոզատէրերը վեասուեցան, նոյն է թէ՝ ինչու թղենին չըրացաւ, թանկագին իւղը թափուեց, ինչու երկրաշարժներ են լինում և քաղաքներ կործանում են: Քրիստոս ոչ ոքի վեասել չէր ուզում անշուշտ, ինչպէս և Աստուած չէ ուզում: բայց նախախնամութեան օրէնքն այս աշխարհի համար այնպէս է, որ շատ զէպքերում մէկը պէտք է վեասուի անհրաժեշտաբար, որպէս զի միւսներն օգտուին, այդպիսի զէպքերում մենք չենք կարող ասել երբէք, թէ ինչու այսպէս եղաւ կամ թէ որն է օգուածը: հաւատում ենք սակայն, որ այդպէս պէտք է լինէր՝ այդ էր Աստուածոյ կամքը:

Ե. «Զնոսա երկոտասանեսին առաքեաց Յիսուս, պատուիրեաց նոցա և ասէ. ի Ճանապարհ հեթանոսաց մի երթայցէք և ի քաղաք Սամարացւոց մի մօտանիցէք, ոյլ երթայք առաւել առ ոչխարն կորուսեալս տանն Խորայէլի» (Մատթ. Ժ. 5—6, Համ. Ժ. 24): Ինչու է խարութիւն զնում և ինչու զրկում է հեթանոսներին շնորհից. չէ որ աշխարհի փրկութեան համար եկաւ նա: Այլ և Պողոս ու Բառնաբաս ուրիշ կերպ են վարուում. «Զի այսպէս պատուիրեաց մեզ Տէր. եղի զքեզ ի

* Եար. Տես. Արարաւ. յուղիս, էջ 269: